**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 01/09.1/5449-2026**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Ձեզ են ուղարկվում Տեղեկատվական համակարգերի կառավարման հանձնաժողովի անդամի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջադրված թեկնածուի տվյալները և վերջինիս վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Առդիր՝ 1 խտանիշք:

Հարգանքով՝

**ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2026 թվականի N 183 - Ա

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով, 3-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի առաջին կազմի երեք տարի պաշտոնավարման ժամկետով անդամի պաշտոնում առաջադրել Սրբուհի Հակոբյանի թեկնածությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան




Սրբուհի Հակոբյան

**Srbuhi.hakobyan@gmail.com**

**Բջջային հեռախոս**


Սրբուհի Հակոբյանը 2023թ-ի ապրիլի 3-ից առ այսօր հանդիսանում է Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության (ՀՏՀԳ) ֆինանսական տնօրենն: Այս պաշտոնում նա ղեկավարում և համակարգում է գործակալության ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործումը ինչպես նաև ներգրավված է գործակալության գործունեության ղեկավարման և համակարգման գործընթացներում:

Ունի ավելի քան 40 տարվա աշխատանքային փորձ մասնագիտական/խորհրդատվական ծառայությունների և ֆինանսատնտեսական ոլորտներում (1987 թ.–ից մինչ օրս), այդ թվում՝ 20 տարի ղեկավար պաշտոններում:

2006թ-ից մինչև 2022թ. հանդիսացել է Դելոյթ միջազգային կազմակերպության գործընկեր, 2013թ-ին հիմնել է Դելոյթ Արմենիա ՓԲԸ-ն և մինչև 2022թ-ը հանդիսացել է ընկերության տնօրենը, 2020-2022 թթ- ին միաժամանակ հանդիսացել է Դելոյթ Վրաստանի տնօրենը և ղեկավար գործընկերը:

Իր մասնագիտական գործունեության ընթացքում ղեկավարել և համակարգել է Հաշվապահական Հաշվառման և աուդիտորական գործնեության միջազգային ստանդարտների տվյալների ներդրման և կիրառման գործընթացները ինչպես Դելոյթի տարբեր գրասենյակներում, այնպես էլ տարբեր կազմակերպություններում: Ակտիվորեն համագործակցել է Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում տարբեր երկրների վերահսկիչ մարմինների հետ այդ ստանդարտների մշակման և կիրառման գործում: 2023թ-ին IFAC -ի հետ համատեղ օգնել է Հայաստանում ներդնել Աուդիտորական ընկերությունների որակի վերահսկման համակարգ և մինչև 2025թ. հանդիսացել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակի հանձնաժողովի անդամ:

Ունի կիրառելի և գործնական գիտելիքներ ստանդարտների ներդրման, կիրառման և վերահսկողության ոլորտներում:

**Կրթություն**

| | | |
|---|---|---|
| 1992-1994 | Հայաստանի Ամերիկյան Համալսարան<br>Գործարար Ղեկավարման Քոլեջ,<br>*Գործարար Ղեկավարման Մագիստրոս* | Երևան, Հայաստան, |
| 1988-1993 | Համառուսական Գյուղատնտեսական Ինստիտուտ, | |

| | | |
|---|---|---|
| | *Տնտեսագիտական գիտությունների թեկնածու* | Մոսկվա, Ռուսաստան, |
| 1983-1988 | Հայկական Գյուղատնտեսական Ինստիտուտ<br>*Տնտեսագետ-հաշվապահ* | Երևան, Հայաստան |
| 1973-1983 | Երևանի 47 միջնակարգ դպրոց | Երևան, Հայաստան |

**Աշխատանքային Փորձ**

| | | |
|---|---|---|
| 2023-առ այսօր | “Հայաստանի տեղեկատվական Համակարգերի գործակալություն” հիմնադրամ<br>*Ֆինանսական փնօրեն* | Երևան, Հայաստան |
| 2020-2022 | “ Դելոյթ էնդ Թոուշ “ՍՊԸ<br>*Ղեկավար գործընկեր* | Թբիլիսի, Վրաստան |
| 2013-2022 | Դելոյթ Հայաստան ՓԲԸ<br>*Հիմնադիր գործընկեր, Տնօրեն* | Երևան, Հայաստան |
| 2006-2020 | Դելոյթ ԱՊՀ<br>*Գործընկեր* | Մոսկվա, Ռուսաստան |
| 1996-2002 | Քեյ-Փի-ԷՄ-Ջի Արմենիա ՓԲԸ<br>*Աուդիտի մենեջեր* | Երևան, Հայաստան |
| 2002-2005 | Քեյ-Փի-ԷՄ-Ջի<br>*Ավագ մենեջեր,աուդիտ* | Մոսկվա, Ռուսաստան, |
| 1995-1996 | Կաթոլիկ Ռելիեֆ Սերվիսիս<br>Ֆինանսական ղեկավար | Երևան, Հայաստան |
| 1993-1995 | ՕՔՍՖԱՄ Հայաստան<br>Ծրագրի Ղեկավար | Երևան, Հայաստան |
| 1990-1993 | Հայկական Գյուղատնտեսական Ինստիտուտ<br>Դասախոս | Երևան, Հայաստան |

**Լիցենզիաներ և անդամակցություններ**

* Մեծ Բրիտանիայի Որակավորված Հաշվապահների Միավորման պատվավոր անդամ
* Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի անդամ

**Անձնական տվյալներ**

* Ծնվել է 1966թ-ի դեկտեմբերի 21-ին, Երևանում,
* Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Հայերենը հանդիսանում է մայրենի լեզու, վարժ տիրապետում է անգլերեն և ռուսերեն լեզուներին:
* Ամուսնացած չէ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սրբուհի Էդուարդի Հակոբյանը
/անուն, հայրանուն, ազգանուն/

Անձը հաստատող փաստաթուղթ՝ , տրված . ի կողմից
/սերիա, համար/ /ամսաթիվ և ում կողմից/

բնակչության պետական ռեգիստրի տվյալներով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Այլ երկրի քաղաքացիության վերաբերյալ ԲՊՌ-ում նշում առկա չէ:

**ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության բնակչության պետական ռեգիստրի վարման բաժնի պետ Վաղինակ Նիկողոսյան**

Recoverable Signature

X

ՎԱՂԻՆԱԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Signed by: NIKOGHOSYAN VAGHINAK 1105860361

Կ. Տ.

«13» 02 2026թ.

N 42/94/6/39816-26

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ես՝ Սրբուհի Հակոբյանս, սույնով հայտարարում եմ, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկված չեմ:

13/02/2026

Սրբուհի Հակոբյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Սրբուհի Հակոբյանս, սույնով հայտարարում եմ, որ որևէ քաղաքական կուսակցության անդամ չեմ հանդիսանում և չեմ զբաղվում քաղաքական գործունեությամբ:

Սրբուհի Հակոբյան

16.02.1966

# ԴԻՊԼՈՄ

## ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՄԲ

ԿВ № 010845

Սույն դիպլոմը տրված է Սրբուհի Էդուարդի Հակոբյանին

առ այն, որ նա 1983 թվականին ընդունվել է Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտ

և 1987 թվականին ավարտել է նույն ինստիտուտի լրիվ դասընթացը

Հաշվ. հաշվառումը և տնտ. գործունեության վերլուծությունը գյուղ. տնտ. մասնագիտությամբ։

Պետական քննական հանձնաժողովի 1987 թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ տրված է Ս. Է. Հակոբյանին գյուղատնտ.-հաշվ. հաշվառման գծով տնտեսագետի որակավորում։

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Կ. Տ.

Ռեկտոր

Քարտուղար

Քաղաք Երևան «5» դեկտեմբերի 1987 թ.

Գրանցման № 711

Армянский яз.

# ДИПЛОМ

## С ОТЛИЧИЕМ

КВ № 010845

Настоящий диплом выдан Акопян Србуи Эдуардовне

в том, что она в 1983 году поступила в Армянский Сельскохозяйственный институт

и в 1987 году окончила полный курс названного института

по специальности бухгалтерский учет и анализ хоз. деятельности в сельском хозяйстве

Решением Государственной экзаменационной комиссии от „28" ноября 1987 г.

Акопян С. Э.

присвоена квалификация экономист по бухгалтерскому учету в с/х

Председатель Государственной экзаменационной комиссии

Ректор

Секретарь

М. П.

Город Ереван „5" декабря 1987 г.

Регистрационный № 711

Московская типография Гознака. 1982.

# Հայաստանի Ամերիկյան Համալսարան

## Գործարար Ղեկավարման Քոլեջի

*դասախոսական կազմի հանձնարարությամբ եւ*
*Հայաստանի Հանրապետության ու ԱՄՆ-ի*
*Քալիֆորնիա նահանգի օրենքներով*
*իրեն վստահված իշխանությամբ,*
*Համալսարանը շնորհում է*

# Սրբուհի Ե. Հակոբյան

**Գործարար Ղեկավարման Մագիստրոսի կոչում**

*կոչումը ենթադրող բոլոր*
*իրավունքներով եւ առանձնաշնորհումներով:*
*Հանձնված Երեւանում, Հայաստան,*
**16** *օր* **Հոկտեմբեր** *ամիս, 1994 թ.*

MINISTER
OF HIGHER EDUCATION
REPUBLIC OF ARMENIA

PRESIDENT
OF THE
UNIVERSITY

# The American University of Armenia

*On the recommendation of the faculty of*

## The College of Business and Management

*the University has, by virtue of the authority*
*vested in it under the laws of the Republic of Armenia*
*and the State of California in the United States,*
*conferred upon*

# Srbuhy E. Hakobian

*the degree of*

**Master of Business Administration**

*with all the rights and privileges thereto pertaining.*
*Given at Yerevan, Armenia*
*this* **16** *day of* **October** *, in the year 1994.*

CHAIRMAN
BOARD OF TRUSTEES

DEAN
OF THE COLLEGE

AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Founded 1991
In Yerevan

**AMX** Central Depository of Armenia

**3/968-2026**

**Սրբուհի Էդուարդի Հակոբյանին**

Հարգելի տիկին Հակոբյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲ ընկերության արժթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում 13.02.2026 թվականի դրությամբ Սրբուհի Էդուարդի Հակոբյան (անձնագիր՝ անվամբ արժեթղթեր գրանցված չեն:

Հարգանքով՝

**Գլխավոր տնօրեն** **Անի Մակարյան**

Կատարող՝ Հ Հայրապետյան
հեռ.՝ 060615555 / 234

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ
Հեռ.՝ +379 60 61 55 55 | Էլ. հասցե՝ info@amx.am
Հասցե՝ Վ. Սարգսյան 26/1, 5-րդ հարկ,
ՀՀ, Երևան 0010 | www.cda.am

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ**
**ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**

0051 ք. Երևան, Կոմիտաս 49/3
Էլ.փոստ՝ stateregister@moj.am
Հեռ. +374 (10) 59-39-43
+374 (10) 20-14-37

Ել. N/25.8/7572-2026
«18» «փետրվարի» 2026թ.

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԻՐՔՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ**

Համաձայն իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում 2026 թվականի փետրվարի 18-ի ժամը 09:25-ի դրությամբ առկա տեղեկությունների՝ **Սիրքուհի Էդուարդի Հակոբյանը** (անձնագիր ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում հաշվառված չէ որպես անհատ ձեռնարկատեր/վերջին 5 տարիների ընթացքում չի եղել և գրանցված որևէ ՍՊ ընկերության մասնակից չէ/ վերջին 5 տարիների ընթացքում չի եղել:

**Սիրքուհի Էդուարդի Հակոբյանը** 31.10.2012 թվականից մինչև 09.08.2022 թվականը եղել է գործադիր մարմնի ղեկավար **«ԶԻԵԼԹԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ»** (գրանցման համար՝ 286.120.737788, ՀՎՀՀ՝ 02612726, գրանցման ամսաթիվ՝ 31.10.2012, նախկին անվանում՝ **«ԴԵԼՈՅԹ ԱՐՄԵՆԻԱ»**) ՓԲ ընկերությունում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործակալությունը միասնական պետական գրանցամատյանում գրառում է միայն

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ: Բաժնետիրական ընկերությունների ռեեստր գործակալությունը չի վարում: Առևտրային կոոպերատիվների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ միասնական պետական գրանցամատյանում չեն գրառվում», ***հետևաբար բաժնետիրական ընկերության բաժնետերերի, ինչպես նաև կոոպերատիվի անդամների վերաբերյալ*** տեղեկությունների ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը չի տիրապետում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԼԱԼԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ

2026-02-18 10:32:54 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

miD

Կատարող՝ Ք. Պետրոսյան
Տեղեկատվության մշակման բաժին
հեռ. (+374 10) 20-14-35

# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

**0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ. (00374 10) 511-794, www.court.am**

**№ ԴԴՎ-1** Է-1004

**«16» փետրվարի 2026թ.**

**ՍՐԲՈՒՀԻ ԷԴՈՒԱՐԴԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**

**Հարգելի տիկին Հակոբյան,**

Ի պատասխան Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում 16.02.2026թ. մուտքագրված Ձեր դիմումի՝ տեղեկացվում է, որ ըստ «Դատական համակարգ» տեղեկատվական համակարգչային ծրագրում առկա տվյալների (սկսած՝ 2008 թվականից)՝ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից Սրբուհի Էդուարդի Հակոբյանին (ծնված՝ 21.12.1966թ.,
անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտեր չեն կայացվել:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ**
**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ**
**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**ԱՐՄԻՆԵ ԱԼԻԽԱՆՅԱՆ**

Դատական պրակտիկայի վերլուծության և
մշտադիտարկման վարչություն
Կատ.՝ Ա. Ասատրյան
Հեռ. (010) 511-821